ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-741-18.09.2020-ՄԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան | Նախագծի վերնագրում | Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը հանվում են: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն հաշվի առնելով Նախագծում կատրված փոփոխությունները անհրաժեշտություն է առաջանում նաեւ համապատասխանաբար փոխել Նախագծի վերնագիրը՝ դրանում նշելով միայն «ԼՐԱՑՈՒՄ» բառը: | Առաջարկը ընդունվել է: |
| 2. | ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան | Հոդված 1. | «(այսուհետ՝ Օրենք) 13.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝» բառերը և թվերը փոխարինել «լրացնել նոր 13. 2- | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն հաշվի առնելով, որ «Տոների եւ հիշատակ օրերի մասին» | Առաջարկը ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | րդ հոդվածով՝» բառերով և թվերով, ինչպես նաև «Հոդված 13. 1. » թվերը փոխարինել «Հոդված 13. 2. » թվերով | օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13.1-ին հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, մինչդեռ, փաստացի, Նախագծի 13.1-ին հոդվածը ոչ թե նոր խմբագրությամբ է շարադրվում, այլ գործող հոդվածների միջեւ լրացվում է նոր հոդված, ինչի արդյունքում լրացվող եւ գործող հոդվածների համարների փոփոխություն է կատարվում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 14-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելիս փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի, պարբերությունների | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | համարների փոփոխություն չի կատարվում: Նորմատիվ իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջեւ համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով»: | |
| 3. | ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան | Հոդված 2. | «Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 13.2-րդ հոդվածով`«Հոդված 13.2. Ուսուցչի օր` նշվում է հոկտեմբերի 5-ին:» Հոդված 2-ը հանել նախագծից: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն Հիմք ընդունելով, որ Նախագծով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների օրվան վերաբերող 13.1-ին հոդվածը պետք է լրացվի 13.2-րդ հոդվածի շրջանակներում, իսկ ուսուցիչների օրվան | Առաջարկը ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վերաբերող 13.2-րդ հոդվածը լրացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ նույնությամբ կրկնում է Օրենքի 13.1-ին հոդվածի բովանդակությունը: | |
| **4.** | ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան | Հոդված 3. | Առաջարկվում է Նախագծի Հոդված 3. թիվը փոխարինել 2. թվով | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, այն պայմանվորված է նախագծում կատարված փոփոխություններից | Առաջարկը ընդունվել է |